

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVІІІ ԳԵՐՈՒՄ

Հնդկաստանցի նանապարհորդը

I

Մեր այս աշխատութեան առաջին մասը *) մենք վերջացրինք՝ նկարագրելով այն խոշոր դերը, որ կատարեց հնդկահայ գաղթականութիւնը XVІІ գարի մեր գրական և քաղաքական շարժման մէջ: Մենք տեսանք, թէ ինչպէս Հնդկաստանի նման մի հեռաւոր երկրում մի բուն վաճառական հայ ժողովուրդը հանրային գործունէութեան գեղեցիկ սերմեր է աճեցնում իր մէջ, ինչպէս նա հիմք է դնում աշխարհիկ գրականութեան, հասարակական և քաղաքական գաղափարներով տոգորուած հրապարակախօսութեան: Մեր պատմութեան մէջ առաջին անգամ հանդէս եկած այդ խոշոր երևոյթը բացատրելու համար մենք երկար խօսեցինք անգլիական ազդեցութեան մասին, որի պտուղներից էին Հնդկաստանի հայերը, տեսանք, թէ ինչպէս մի կողմից վաճառականութեան փարթամութիւնը անբարոյականութեան անդունդն է գլորում հնդկահայերից շատերին, բայց միւս կողմից անգլիական լուսաւոր ոգու ազդեցութեան տակ ծնւում է հայ վաճառականների մի մասի մէջ իրանց հեռաւոր ու խաւար հայրենիքի համար գործելու բուն եռանդը: Մենք ծանօթացրինք ընթերցողին այն բոլոր նշանաւոր դէմքերի հետ, որոնք աչքի են ընկնում այդ ասպարէզում:

Այստեղ, նախ քան մեր գործի շարունակութեան ձեռք տալը, մենք մեզ պարտաւոր ենք համարում նորից վերադառնալ հնդկահայերին, որովհետև մենք իմացանք, որ նրանց մասին

*) Տես 1901 թ. «Մուրճ»:

մեր ունեցած տեղեկութիւնները լիակատար չէին: Մենք նոր միայն կարողացանք ձեռք բերել մեր գրականութեան մինչև այժմ անյայտ մնացած մի շատ կարևոր պատմական յիշատակարան, որ ոչ միայն պայծառ լոյս է սփռում XVIII դարի մեր պատմութեան վրայ, այլև խաւարի ու անյայտութեան միջից դուրս է հանում մի վերին աստիճանի հետաքրքրական դէմք, որ իր կատարած գործերով, իր գաղափարներով արժանի է Իսրայէլ Օրիի և նրա նման խոշոր գործիչների հետ դասուելու:

Այդ դէմքը Յովսէփ Էմինն է: Մենք յիշել ենք նրան մեր պատմութեան առաջին մասում *), բայց շատ անարդար ենք եղել նրա վերաբերմամբ: Մեղը՝ իհարկէ՛ մերը չէ. մենք կրկնել ենք նրա վերաբերմամբ այն, ինչ գտել էինք մեր գրականութեան մէջ: Իսկ այդ գրական աղբիւրները միանգամայն սխալ, երևակայական տեղեկութիւններ են պարունակում: Նախ և առաջ ասենք, որ աղճատուած է անունը. նա կոչուած է Էմին Յովսէփեան, մինչդեռ նրա իսկական անունն էր Յովսէփ Էմին: Յետոյ՝ նա հռչակուած է իբրև շատ հարուստ մի վաճառական, որ միլլիոնների կարողութիւն ունէր: Մանաւանդ այս զրպարտութեան դէմ պիտի բողոքէ Էմինի յիշատակը: Այդ միլլիոններով Էմինը որպէս թէ կամենում էր գնել Հայաստանի ազատութիւնը, բայց աջողութիւն չ'ունեցաւ: Սա էլ մի հանգամանք է, որ աղճատում է այդ նշանաւոր հայի գործունէութիւնը, մի գործունէութիւն, որ հիմնուած էր ոչ թէ ոսկու կոյտերի վրայ, այլ աղքատ զինւորի սրի վրայ, որին միացած էր գաղափարական քարոզչութիւնը:

Ի՞նչպէս է մեր գրականութեան մէջ ստեղծուել այդ անասպելը:

Ռուսաց դիւանատներում պահուած պաշտօնական թղթերի մէջ**) յիշատակուած է հնդկաստանցի հայ Էմինը, որ 1760 թւին Լոնդոնից եկաւ Պետերբուրգ և բանակցութիւններ սկսեց ռուսաց արքունիքի հետ հայերի քաղաքական վիճակի մասին: Հանգուցեալ Ալեքսանդր Երիցեանը կարգալով այդ տեղեկութիւնը՝ չէ բաւականացել այնքանով, ինչ տալիս են պաշտօնական թղթերը, այլ կամեցել է ասել և այն, թէ ինչ տեսակ մարդ էր այդ Էմինը: Չ'ունենալով, ինչպէս երևում է, հաստատ տեղեկութիւններ, հանգուցեալը դիմել է երևակայական ենթադրութիւնների: Իմանալով, որ հնդկաստանցի հայերը առ-

*) «Մուրճ», 1901, № 9, եր. 137:

**) Бутковъ: «Материалы по Исторіи Кавказа».

հասարակ շատ հարուստ էին և իբրև վաճառական՝ կարող էին և ձգտում էին միայն փողով ազատութիւն գնել իրանց հայրենիքի համար, նա էմիինն էլ զնում է այդ տեսակ հայերի շարքում և գրում է. «1760 թւին Պետերբուրգ եկաւ Անգլիայից մի հարուստ հայ էմինն Յովսէփեան անունով, որ համադանցի էր և Հնդկաստանումը միլլիոններ էր աշխատել: Սա ցանկանալով մեր հայրենեաց անկախութիւնը, միջնորդեց կայսերական զբանը և խնդրեց հարկաւոր օգնութիւն մատուցանել հայերին, փոխարէն առաջարկելով իր բոլոր հարստութիւնը» *):

Այս է եղել այն գրաւոր ազբիւրը, որից ես օգտուել եմ իմ աշխատութեան մէջ: Կրկնելով Երիցեանի այդ խօսքերը՝ կարող էի ես երեւկայել, որ նրա պէս ես էլ նահատակում եմ մի պատմական մեծ ճշմարտութիւն:

Այդ բանը ես իմացայ յետոյ, երբ աշխատութիւնս տըպուած վերջացած էր: Անցեալ տարի իմ ձեռքն անցաւ 1856 թւականի «Մասեաց Աղանի» ամսագիրը, որ այժմ հազագիւտ հրատարակութիւններից մէկն է: Այստեղ կարդացի մի յօդուած՝ «Յովսէփ էմինն և Էդմոնդ Բըրք» վերնագրով և զարմանքով իմացայ, որ Յովսէփ էմինը միլլիոնների տէր մի հարուստ չէ եղել, այլ մի շատ աղքատ մարդ, որ Հնդկաստանից հազար ու մի նեղութեամբ Լոնդոն ընկնելով՝ ապրել է դառնութիւններէ մէջ, համարեա ողորմութիւն ստանալով: Բայց այդ աղքատը այնքան շնորհալի, եռանդոտ մէկն է եղել, որ ծանօթացել է նոյնիսկ Էդմոնդ Բըրքի հետ, այն հռչակաւոր պետական մարդու և գրողի հետ, որ XVIII դարում Անգլիայի պարծանքներից մէկն էր համարւում: Ես իմացայ նոյնպէս, որ էմինը Լոնդոն էր գնացել զինուորական կրթութիւն ստանալու և իբրև հմուտ զինուոր՝ իր հայրենիքը ազատելու համար: Նա Լոնդոնում մի քանի բարերարների աջակցութեամբ հասնում է իր նպատակին, մտնում է զինուորական դպրոց, ծառայում է անգլիական և գերմանական բանակներում և ապա իր բարձրաստիճան բարեկամների օգնութեամբ կաշնում է իր ծրագրած գործին: Ճանապարհորդում է Հայաստանում, նորից վերադառնում է Անգլիա դրամական օժանդակութիւն գտնելու համար, ապա անցնում է Պետերբուրգ, որտեղից մեծ դժուարութիւններով գնում Թիֆլիս, Հերակլ Թագաւորի մօտ: Թիֆլիսում և իր հայրենիքի լեոնեւրում մնում է ութ տարի, բայց վերջիվերջոյ չը կարողանալով իրագործել իր մտադրութիւնները՝ թողնում է ամեն ինչ և գնում Հնդկաստան:

*) «Փորձ», եռամսեայ հանդէս, II տարի, № I, էր. 375:

Ահա ով էր էմինը: «Գործունեայ ու կարգէ դուրս զարմանալի մարդ» է անուանում նրան մի անգլիացի գրող և աւելացնում է. «Թէ որ բախտը այս մարդուն քիչ մը աւելի օգնած ըլլար, կրնար անշուշտ մեծանուն մարդկանց մէկն ըլլալ»: Իսկ մի ուրիշ անգլիացի, լորդ Թէյնմաութ, այսպէս է բնորոշում մեր հնդկաստանցի հային. «էմին այն մարդն էր ուրեմն որ հետզհետէ նաւավար, բեռնակիր, ծառայ եղաւ. ողորմութեամբ ապրեցաւ, ագնւականաց ընկերութեանը մէջ մտաւ, իշխաններէ ու թագաւորներէ պաշտպանութիւն գըտաւ, մեծամեծ թշուառութեանց մէջ ալ գիտցաւ իւր պատիւը, սրտի անկեղծութիւնը, Աստուծոյ նախախնամութեանը վրայ ունեցած վստահութիւնը և քրիստոնէութեան սկզբանց վրայ հաստատուն սէրը պահել, որոնց մէջ ինքը մեծցած էր» *):

Անգլիացիների մէջ այնպիսի ջերմ համակրութիւն գտած, այնպիսի վկայութիւններով յանձնարարուած մի հայ մարդ, բընականաբար, մեծ հետաքրքրութիւն պիտի ունենար մեզ, հայերիս համար: Կարևորը միայն այդ չէր: Նոյն անգլիական լորդը 'ի վերջոյ ասում է, թէ Յովսէփ էմինը իր բոլոր արկածները մանրամասն գրել է և հրատարակել անգլիերէն լեզուով: էմինին մեր պատմութեան վերադարձնելու համար պէտք էր գտնել նրա գրած գիրքը: Անշուշտ, ականատեսի այդ մանրամասն յիշատակարանը մի շատ թանգագին պատմական աղբիւր պիտի լինէր XVIII դարի մեր պատմութեան համար: Եթէ Իսրայէլ Օրիի մի քանի պաշտօնական նամակները այնքան լայն ու մեծ հորիզոններ բացին մեր առջև, հապա ի՞նչ պիտի անէր մի ուրիշ նշանաւոր մարդու ինքնակենսագրութիւնը, մի մարդու, որ նուիրուած էր նոյն Օրիի գործին, որ տարիներով գործել էր հայերի մէջ և նկարագրել էր ամեն ինչ ոչ թէ պաշտօնական չոր ու համառօտ լեզուով, այլ մանրամասն կերպով, համարձակ ոճով...

Այս բոլորը հեշտ էր գուշակել, բայց հեշտ չէր այդ հետաքրքրական գիրքը գտնելը: Երկար մտածում էի՝ ո՞ւմ գիմել, ո՞րտեղ որոնել—Հնդկաստանում, թէ՞ Անգլիայում: Ես պէտք է ասեմ, որ էմինի կենսագրութիւնը գտնելը յանկարծ շատ հեշտ բան դարձաւ շնորհիւ Լազարեան ճեմարանի տեսուչ պրոֆեսոր Գրիգոր Խալաթեանի սիրալիւր աջակցութեան: Իմ յարգելի բարեկամը իրան յատուկ պատրաստականութեամբ արձագանգ տուեց իմ դիմումներին: Յայտնի դարձաւ, որ էմինի գրքից մի հատ կայ Լազարեան ճեմարանի գրադարանում այն գրքերի

*) «Մասնայ Աղանի», 1856, կր. 270.

մէջ, որ նուիրել է հանգուցեալ հայագէտ Մկրտիչ Էմինը *)։ Մենք սկսեցինք անմիջապէս բանակցութիւններ վարել՝ այդ յիշատակարանը հայերէն թարգմանելու մասին։ Պրոֆեսոր Խալաթեանը այստեղ էլ շատ ջանք գործ դրեց. նա գտաւ գիրքը տպագրելու միջոց, գտաւ հմուտ թարգմանիչ, բայց շուտով մենք կանգ առանք մի դժուար հարցի առաջ—թարգմանչին վարձատրելու հարցը։ Հարկաւոր էր 5—6 հարիւր ըուբլու մի գումար։ Ահա այդ դժուարութիւնը չը կարողացանք մինչև այժմ վերացնել, չը նայած որ Էմինի գիրքը, ինչպէս տեղեկացանք, մի վերին աստիճանի հետաքրքրական գիրք, չ'ունի իր նմանը մեր գրականութեան մէջ։

Այս տողերով ես ուզում եմ մեր ընթերցասէրների ուշադրութիւնը հրաւիրել այս գրքի վրայ։ Անհրաժեշտ հարկաւոր է, որ նա թարգմանուի հայերէն, որովհետեւ նա հարստութիւն է մեզ համար ոչ միայն փրբեկ պատմական յիշատակարան, այլև իբրև ընթերցանութեան մի շատ սիրուն, հետաքրքրաշարժ գիրք։ Նա տպուած է Լոնդոնում 1792 թւին շատ փոքր քանակութեամբ (կարծեմ երկու հարիւր օրինակ միմիայն), այժմ շատ հազուագիւտ է նոյնիսկ Անգլիայում։ Ունի հետևեալ վերնագիրը. «The Lite and Adventures of Joseph Emin, an Armenian»։ Ութածալ գիրքով մի բաւական մեծ հատոր է, տպուած միջակ տառերով։

Այդ աշխատութիւնից մենք կը բերենք մեր պատմութեան համար հարկաւոր տեղերը **)։

II

Յովսէփ Էմինը ծնուել է Պարսկաստանի Համազան քաղաքում 1726 թւին։ Իր տոհմաբանութեան մէջ նա յիշատակում է Էմին առաջինին, որի որդի Աստուածատուրը մէկն էր այն հայերից, որոնց Շահ-Աբասը գաղթեցրեց Հայաստանից Պարսկաստան։ Բնակութիւն հաստատելով Համազան քաղաքում, Աստուածատուրը ունեցաւ մի որդի, որին տուեց Էմին անունը։ Այս երկրորդ Էմինը ընտրեց զինուորական ծառայութիւնը. երկար ժամանակ նա վարում էր հազարապետի պաշտօն պարսից բանակում, բայց յետոյ պաշտօնանկ եղաւ և դարձաւ

*) Պրոֆեսոր Խալաթեանի ասելով՝ Յովսէփ Էմինը մեր հանգուցեալ հայագէտի նախահայրն է։

**) Օգտում ենք այդ գրքի հայերէն համառոտութիւնից, որ սիրալիբ Դոժարութեամբ կատարել է պ. Գ. Փաստրմաջեան «Մուրճ»-ի խմբագրութեան խընդիրով։

կարաւանի չառւշ (պահապան): Մեռաւ 1722 թւականին 110 տարեկան հասակում: Հազարապետ Էմինի որդին էր Միքայէլը, Միքայէլի որդին՝ Յովսէփը, որ մեր Էմինի (երրորդ Էմին) հայրն էր:

Էմինի ընտանիքը մշտապէս Համադանում չ'ապրեց: 1733-ին նա գաղթեց Բաղդատ, բայց չորս տարուց յետոյ նորից վերադարձաւ Համադան: Մեծ կարողութեան տէր չէր Էմինի հայրը, ուստի ստիպուած էր Պարսկաստանի ուրիշ կողմերում էլ բախտ փորձել: Փոքրիկ Էմինը պատանեկութեան վաղ տարիներից ծանօթացաւ թափառական կեանքի հետ, դժուարութիւնների և զրկանքների ենթարկուեց: Մի վառվուռն, համարձակ երիտասարդ էր դա, որին այս աշխարհում գրաւում էր միայն զինուորական պաշտօնը: Հազարապետ Էմինի արիւնն էր նա ժառանգել և պարսից զօրքի մէջ մտնելու համար նա գնաց Սպահան, Շահի արքունիքում խնդրելու, որ իրան զինուոր վերցնեն: Նա պատմում է, ինչպէս սաստիկ հիւանդացաւ ճանապարհին, ինչպէս մի պարսիկ ազատեց նրան մահից, ինչպէս Սպահանի մեծաւորները ծաղրեցին նրա մտադրութիւնը, ինչպէս նա պատասխաններ տուեց պարսիկ պաշտօնեաներին: Այս բոլորի մէջ երևում է մի խիզախ, համարձակ բընաւորութիւն, մի երկաթէ կամք և յամառ տոկունութիւն:

Էմինի հայրը չը կարողանալով Պարսկաստանում ձեռք բերել բարեկեցութիւն, վերջիվերջոյ բռնեց այն ճանապարհը, որով այնքան շատ հայեր հեռացան՝ պարսից շահերի և պաշտօնեաների կեղեքումներից ազատուելու, ազատ շունչ քաշելու համար: Նա գնաց Հնդկաստան և Կալկաթա քաղաքում վաճառականութիւն էր անում: Նրա որդին նոյնպէս չը կարողանալով Պարսկաստանում ասպարէզ գտնել իր համար, մի քանի ժամանակից յետոյ, երբ հազիւ 18 տարեկան մի երիտասարդ էր, գնաց իր հօր մօտ:

Աւելորդ է ասել, թէ եւրոպական ամենաառաջադէմ ազգի ազդեցութեան տակ գտնուող այդ երկիրը ինչ կրթական մեծ նշանակութիւն պիտի ունենար համադանցի երիտասարդի համար: Նա սովորում է անգլիական լեզուն, և նրա աչքի առջև բացւում է քաղաքակիրթ մարդկութեան գեղեցիկ, բայց շատ հեռաւոր տեսարանը, որ սկսում է գրաւել, ապա և յափշտակել այդ կրակոտ երիտասարդութիւնը: Պարսկաստանից Հնդկաստան գնացողը վանդակից ազատուած թռչուն էր. բայց Հնդկաստանն էլ չէր կարող միանգամայն գոհացնել, նա անսահման ազատութիւն չէր, նա այդ ժամանակները դեռ նոր կարգաւորուող մի անգլիական գաղթականութիւն էր, ուր ան-

գլխական մեծ ոգու և ազատ հիմնարկութիւնների ամբողջ ոյժը դեռ չէր արմատացած: Բայց նայելով նոր նուաճուող գաղթականութեան՝ էմինը կարող էր հասկանալ, թէ ինչ պիտի լինի գաղթականութեան տէրը, Բրիտանական մեծ կղզին: Եւ մեր երիտասարդը ովկիանոսի անսահման տարածութիւնների վրայով աչք է տնկում ծովերի թագուհու վրայ: Նրա մէջ վառում է Անգլիան տեսնելու փափազը: Հնդկաստանի վրայ նոր տարածուող անգլիական ազդեցութիւնը սերմեր էր տնկել նրա մէջ: Նա հասկացել էր, թէ ինչ է քաղաքակրթութիւնը, ինչի մէջ է մարդկային երջանկութիւնը, ինչ է նշանակում հայրենիք, ինչ սոսկալի դրութիւն է ստրկութիւնը: Եւ նրա մէջ ծնում է մի յանդուգն միտք, որ համադանցի վաճառականի որդու համար նոյնքան ցնորական, նոյնքան անհնարին պիտի լինէր, որքան Հնդկական ովկիանոսը լողալով անցնելու միտքը: Այդ միտքն էր գնալ Անգլիա, մտնել զինւորական դպրոց, սովորել պատերազմի արհեստը և ազատել հայրենիքը պարսից տիրապետութիւնից:

Ո՞վ կ'ասէր, թէ դա հնարաւոր բան է: Եւ ո՞վ, լսելով այդպիսի մի մտադրութիւն, չէր համարի երիտասարդին ցնորուած: Այդպէս վերաբերուեց ամենից առաջ նրա հայրը: Պարսկաստանցի խեղճ վաճառական հայը ցնցում է՝ լսելով իր որդուց Անգլիա գնալու ցանկութիւն: Միակ բանը, որ նա կարող էր անել իր որդու բախտաւորութեան համար, այն կը լինէր, որ նրան էլ իր նման մի վաճառական կը դարձնէր: Նա հէնց այդ միջոցին այդ ուղղութեամբ էլ աշխատում էր: Ուստի սաստիկ ընդդիմացաւ էմինի մտադրութեան, յայտնեց դրականապէս, որ չի թողնիլ նրան հեռանալ Կալկաթայից: Բայց այստեղ էլ երևան է գալիս որդու յամառութիւնը, կամքի ոյժը: Նա վճռել է գնալ և պիտի գնայ: Հօր և որդու մէջ տեղի են ունենում երկարատե վէճեր և ընդհարումներ: Որդին փորձում է փախչել, բայց աջողութիւն չէ դտնում: Վերջապէս հայրը յաղթում է, բայց դնում է այնպիսի պայման, որ հաւասար էր արգելքի: Համաձայնուելով թողնել որդուն՝ նա չէ տալիս նրան այնքան փող, որ բաւական լինէր ձանապարհածախսի և ապրուստի համար: Էմինը դարձեալ չէ ընկճուում, նա պատրաստ է ամեն տեսակ զրկանքներ կրել, միայն թէ ազատուի իր հօր խանութից և ընկնէ իր երազած աշխարհը:

Կալկաթայից Անգլիա գնացող մի նաւի վրայ նա դառնում է հասարակ նաւաստի, ծառայ՝ մի շատ չնչին ոտճիկով: Գալիս է վերջապէս այն օրը, երբ երիտասարդը հեռանում է Հնդկաստանի ցամաքից և ուղևորւում է դէպի Եւրոպա: Իսնոյեմբեր, 1903.

ժան, անտանելի մի ճանապարհորդութիւն: Նա պիտի ամիսներ տևէր, մի վաճառականական նաւի վրայ, ուր նաւապետի, նաւաստիների կոպտութիւնը ամեն ժամ դառնութիւններ էր պատրաստում անփորձ հայ երիտասարդի համար: Ի՞նչ զրկանքներ ու տանջանքներ ասէք, որ չը կրէր այդ փոքրաւորը. օրերով քաղցած, նաւաստիների փշրանքներով ապրելով, ծեծի և հայհոյանքների տակ, նա անտրտունջ տանում էր իր խաչը, յաղթում էր ամենքին իր հնազանդութեամբ, նկատի առնելով ովկիանների ետևում թագնուած իր նուիրական նպատակը:

Քիչ մարդ կարող է պարծենալ, որ գաղափարին հասնելու համար այնքան փուշ ու տատակ է կոխ տուել մերկ ոտներով: 1751 թւականի փետրուարին դուրս գալով Հնդկաստանից՝ նա վեց ամսից յետոյ հասնում է Անգլիայի ափերին: Յանկալի ցամաքը ոտի տակ է, բայց անձանօթ երիտասարդին այստեղ սպասում է մի աւելի դժուար դրութիւն, որի համեմատութեամբ ծովային ճանապարհորդութիւնը նոյնիսկ նախանձելի կարող է լինել:

Հասնելով Լոնդոն՝ էմինը կարողանում է երկու շաբաթ ապաստան գտնել մի բարի շվեդացու տանը, մինչև որ հանդիպում է Ստեփանոս անունով մի հայ վաճառականի, որ վերցընում է նրան իր տունը և նոյնիսկ օգնում է, որ նա մի մասնաւոր դպրոց գնայ սովորելու: Բայց այդ օգնութիւնը երկար չէ տևում, և էմինը ընկնում է Լոնդոնի փողոցները՝ իր համար մի գործ որոնելու համար: Մի քանի շաբաթ անօգուտ թափառում է ահազին քաղաքի մէջ, իսկ թէ ինչպէս է ապրում, այդ մասին ինքն էլ քաշւում է խօսել: Այդ ժամանակն էր երևի, երբ նա Սենտ-Ջեմսի այգում ծանօթացաւ հոչակաւոր Էդմոնդ Բըրքի հետ: Պատահաբար հանդիպելով իրար, էմինը և Բըրքը խօսակցութեան բռնուեցան: Սօսակցութիւնից յետոյ Բըրքը հըրաւիրեց նրան իր տունը, և երբ էմինը՝ չիմանալով՝ թէ ով է իր հետ խօսողը, ապշած անգլիացու քաղաքավարութիւնից՝ աղաչեց, որ նա շնորհ անէ, իր անունը յայտնէ, Բըրք շատ անուշ եղանակով պատասխանեց. «Ձեր ծառայի անունն է Էդմոնդ Բըրք, ես էլ ձեզ պէս հօրից փախստական մի որդի եմ» *): Ապա տեսնելով էմինի դրութիւնը՝ նա կէս ոսկի

*) Էդմոնդ Բըրք, հոչակաւոր պետական գործիչ, հանճարեղ ստեղծարար, ազատութեան առաջնակարգ զինուոր, հարստահարուած ազգութիւնների մեծ պաշտպան, գիտնական-իրաւաբան, փիլիսոփայ և մատենագիր, ծնուել է Իրլանդիայի Դուբլին քաղաքում 1730-ին. տեղափոխուելով Լոնդոն՝ մեծ հոչակ ըստացաւ իր գործունէութեամբ և անգլիական մեծ մարդկանց շարքը մտաւ:

տուեց նրան և ասաց. «Պատուիս վրայ ասում եմ, որ հիմիկուայ ունեցածս միայն այսչափ է, խնդրեմ ընդունէք»:

Բարի անգլիացին այդքանով չը բաւականացաւ: Հետեւեալ օրը նա այցելեց հայ պանդուխտին, խորհուրդներ տուեց, թէ ինչ գրքեր պէտք է կարդալ, ծանօթացրեց էմիլին իր ազգականի հետ: Մի խօսքով Սենտ-Ջեմսի այգում տեղի ունեցած հանդիպումը սկիզբ դառաւ մի մօտիկ ծանօթութեան, որ տասնեակ տարիներ տեւեց, և էդմոնդ Բըրքը փառքի գագաթնակէտին հասնելուց յետոյ էլ չը մոռացաւ իր հայ բարեկամին: Էմիլը շարունակ մեծ երախտագիտութեամբ էր յիշում Բըրքին և ազգականին, որոնցից միայն բարիքներ էր տեսել: Բարիքներ աւելի բարոյական մտքով: Նիւթականի մասին ինքը էմիլը շատ չէր հոգում, որովհետեւ շարունակ պատրաստ էր ամեն տեսակ աշխատանք յանձն առնել իր մարմինը ապրեցնելու համար, միայն թէ իր նպատակին հասնէ: Բըրքի պէս մարդու հետ ծանօթանալը արդէն բաւական էր, որ նա հաւատայ, թէ կարող է իր որոնած ուսումն ու գիտութիւնը ստանալ:

Իսկ ինչպէս էր նա ապրում այդ միջոցին: Առաջ նա դրոշնապահ դարձաւ և գոհ էր այդ պաշտօնից, որովհետեւ յարմարութիւն ունէր անգլիերէն գրքեր կարդալու: Բայց պաշտօնները, որքան էլ ողորմելի լինէին, երկարատեւ չէին նրա համար: Մի կարճ ժամանակից յետոյ մեր դոնապահը մի մանրավաճառի խանութ է մտնում՝ 8 անգլիական ոսկի տարեկան ոռճիկով (մօտ 80 ռուբլի): Այդ միջոցին Հնդկաստանից եկած մի անգլիացի բերում է էմիլին մի նամակ նրա հօրից: Հայրը ուղարկել էր 500 ռուբլի այն պայմանով, որ որդին իսկոյն վերադառնայ Հնդկաստան: Մի ժամանակ, երբ էմիլը անգործ թափառում էր Լոնդոնի փողոցներում, եղան ըողկներ, երբ նա տատանւում էր, յաղթահարւում էր դառն ճակատագրից և մըտածում էր տուն վերադառնալու մասին: Բայց Բըրքի հետ ծանօթանալուց, փոքրիշատէ տանելի ապրուստ ճարելուց յետոյ նա մտքից հանեց վերադարձը: Հօր առաջարկութիւնը չ'ընդունեց, չ'ընդունեց նաև նրա ուղարկած փողը: Մանրավաճառի խանութում ծառայելն էլ կարճատեւ էր: Էմիլը այնուհետեւ գրագիր է մի փաստաբանի մօտ, բայց մի քանի շաբթից յետոյ այդ գործից էլ է զրկուած, մի առժամանակ էլ կարողանում է գտնել արտագրութեան գործ, բայց այդ էլ մեծ դժուարութեամբ:

Մի բախտաւոր դէպք վերջ է դնում էմիլի թափառումներին և տանջանքներին: Մի օր նա փողոցում պատահում է թիւրքական հագուստ կրող մի մարդու: Հարցովործից էմիլ-

նը իմանում է, որ դա մի հալէպցի հայ է, որ Նորթումբերլանդի դուքսի համար մի արարական ձի է բերել Հալէպից: Նա որոնում էր մէկին, որ իր հետ գնայ դուքսի մօտ և թարգմանէ իր ասելիքները: Էմինը յանձն է առնում այդ պաշտօնը կատարել հալէպցու համար: Դուքսը լսելով իր ծառաներից, որ ձիապանի հետ եկել է անգլիերէն խօսող մի հայ, հետաքրքրուում է, կանչում է իր մօտ Էմինին: Շատ լաւ տպաւորութիւն է թողնում նա անգլիացի բարձր ազնւականի վրայ: Եւ մի քանի օրից յետոյ Էմինը ներկայացնում է նրան մի փոքրիկ գրութիւն:

Դա Էմինի կենսագրութիւնն էր: Այդտեղ նա պատմում էր իր ընտանեկան հանգամանքները, թէ ինչպէս գնաց Հնդկաստան, ինչպէս ծանօթացաւ եւրոպական քաղաքակրթութեան հետ, ինչ մտքեր ծնեցրեց այդ ծանօթութիւնը: Տեսնելով եւրոպացիների զինւորական կարգերը, նրա մէջ նախանձ ծագեց. համեմատելով եւրոպացիների կեանքը իր հայրենակիցների կեանքի հետ, տեսաւ ահագին տարբերութիւն և վերջը եկաւ այն համոզմունքին, որ եթէ հայերից մէկը կարողանայ սովորել եւրոպական զինւորութիւնը և անցնել իր թշուառ, բայց քաջ հայրենակիցների զուխը, հեշտութեամբ կ'ազատէ հայրենիքը մահմէդական գերութիւնից: Ապա պատմելով իր ճանապարհորդութիւնը, Լոնդոնում կրած իր զրկանքները, նա ասում էր, որ իր ամբողջ ցանկութիւնը կենտրոնացած է իր իր այդ բուն նպատակի վրայ, այսինքն զինւորական կրթութիւն ստանալ և գնալ հայրենիք: Եթէ չ'իրագործուի այս միտքը, Էմինը իրան ամենաթշուառ մարդկանցից մէկը պիտի համարէ:

Գրութիւնը աւելի ևս զրգռում է Նորթումբերլանդի դուքսի հետաքրքրութիւնը, խոր տպաւորութիւն է թողնում նրա վրայ անձանօթ արևելցու ընտրած նպատակը և նա վճռում է մի բան անել Էմինի համար: Խօսում է նրա մասին իր ծանօթ ազգականների շրջանում, մինչև իսկ արքունիքում. թագաւորական ընտանիքի անդամ Կումբերլանդի դուքսը նոյնպէս հետաքրքրուում է և Էմինին վերցնում է իր հովանաւորութեան տակ: Նրա հրամանով արևելցի երիտասարդը ընդունւում է Վալվիչի զինւորական ակադեմիայում:

Չորս տարուայ ամնջանքները զուր չը կորան, նրանք նոյնիսկ լիուլի վարձատրեցին խիզախ և տոկուն տղամարդին: Զինւորական ակադեմիայի այդ նոր աշակերտը դարձաւ ամենահետաքրքրական անձնաւորութիւնը Լոնդոնում և ծանօթացաւ բարձր հասարակութեան հետ: Նաւի փոքրաւոր, զոնա-

պահ էմինի երազները սկսում են իրականանալ: Բայց ակադեմիայի ընթացքը աւարտել նա չէ կարողանում: Պատերազմ է ծագում Անգլիայի և Ֆրանսիայի մէջ: Կումբերլանդի դուքսը հարցնում է իր հովանաւորեալին, կամեն՞ում է նա մնալ դպրոցում, թէ՞ աւելի լաւ է համարում մտնել գործող բանակի մէջ և մասնակցել պատերազմին իբրև կամաւոր: Էմինը այս վերջինն է ընտրում և մտնում է այն զօրաբաժինը, որ գերմանական բանակի հետ պիտի միանար: Դուքսը յանձնարարում է էմինին մի գերմանացի զօրավարի և խնդրում է, որ նա ուշադրութիւն դարձնէ այդ կամաւորի վրայ: Էմինը մասնակցում է 18 պատերազմական գործողութիւնների: Կումբերլանդի դուքսը միանգամայն գոհ լինելով նրա քաջութիւնից՝ դրամական առատ վարձատրութիւն է տալիս նրան և ուղարկում է Լոնդոն:

Նախապատրաստական քայլերը արուած են: Ձինւորական ակադեմիան սկիզբ է դրել, պատերազմական ծուխը գործնականապէս պատրաստել է նրան, մկրտել է իսկական զինւոր: Լոնդոնի մէջ էմինի համար այլևս հրապոյր չը կայ. նա ձրգտում է ղէպի արևելք, ուր ապրում էր նրա գաղափարը: Եւ նա սկսում է իր գործը: Նամակներ է գրում իր հօրը, Հնդկաստանի հայերին, պատմում է իր աջողութիւնները, պարգում է իր միտքը: Հայրը ուրախացած է, օրհնում է որդուն, մոռացութեան է տալիս անցեալը, երբ ինքը արգելքի գեր էր կատարում: Բայց գլխաւորը այդ չէ: Ի՞նչպէս ազատել մահմէդական արևելքում տառապող քրիստոնէութիւնը: Այս հարցն է էմինի միտքը գրաւում:

Մենք տեսանք, որ Իսրայէլ Օրին նոյն այդ հարցի վրէժիւր գտնելու համար մտածում էր այսպէս. հայերը կարող են պատերազմող ոյժ հանդիսանալ, քայց նրանց պէտք է հաւաքել, կազմակերպել, նրանց պէտք է ուժեղացնել, ղնել որևէ թագաւորող տան հովանու տակ գլխաւորապէս այն պատճառով. որ այդ տունը կ'ունենայ մշտական զինւորութիւն, զօրքերի հրամանատարներ: Այսպիսի մի քաղաքական մարմին կար հայերի կողքին և դա Վրաստանն էր. վրաց ազգը, նոյնպէս քրիստոնէայ, նոյնպէս հպատակ մահմէդականութեան, խորովւում էր հայերի հետ մի կաթսայի մէջ, հետևապէս նա պիտի միանար հայերի հետ՝ ընդհանուր անտանելի լուծը թօթափելու համար: Այդ պատճառով Օրին նախ քան որևէ քայլ անելը դիմեց վրաց թագաւորին, առաջարկեց զինակցութիւն և միաբան գործողութիւն: Այսպէս վարուեց և էմինը: Նրա առջև էլ կար միևնոյն ճշմարտութիւնը, և նա իր ծրագրի, իրագործման

առաջին սրայմանն էր համարում հայ-վրացական միութիւնը: Բացի սրանից, ինչպէս ասացինք մեր այս գործի առաջին մասում, կար և մի նշանաւոր հանգամանք, որ XVІІІ դարի հայ գործիչները համար առաջնորդող աստղի դեր էր կատարում: Դա այն էր, որ վրաց թագաւորները Բագրատունի էին, ուրեմըն ցեղական մերձաւորութիւն ունէին այն տոհմի հետ, որ մի ժամանակ թագաւորում էր Հայաստանում: Ուստի և միանգամայն արդար ու բնական էին համարում, որ վրացի Բագրատունիները գործի գլուխ կանգնեն, ազատուած քրիստոնեաներից մի թագաւորութիւն կազմեն, իրանք էլ այդ թագաւորութեան գահը ստանան:

Նոյն այդ գաղափարը հարկադրում է էմինին առաջ ու առաջ վրաց թագաւորին մօտենալ: Եւ իրաւ, իր հօրը և հնդկաստանցի հայերին ուղարկած իր նամակների հետ նա մի նամակ էլ Հերակլ թագաւորին է գրում: Երկար բացատրում է այդ նամակի մէջ եւրոպական կուլտուրայի առաւելութիւնները, զինուորական ոյժի գերազանցութիւնը, անտեսական բարգաւաճումը: Իբրև օրինակ՝ նա՝ իհարկէ՛ Անգլիան ունի աչքի առաջ և խորհուրդ է տալիս Հերակլին հետեւել եւրոպական ազգերին, մանաւանդ անգլիացիներին: Ապա պատմում է, թէ ով է ինքը, ինչ մտքով է Անգլիա գնացել և առաջարկում է իր ծառայութիւնը Հերակլին. խոստանում է ծառայել առանց նիւթական ակնկալութեան, ձրի:

Այս նամակի պատասխանը էմինը չէ ստանում: Սպասելով մի աւելի յարմար ժամանակի՝ նա նորից մտնում է գերմանական զօրքերի շարքը, անձամբ ներկայանալով Ֆրիդրիխ թագաւորին՝ դարձեալ մասնակցում է պատերազմական գործողութիւններին, դարձեալ վերադառնում է Լոնդոն: Բայց զգում է, որ Լոնդոնում չը պէտք է սպասել գործի աշոյակ սկզբնաւորութեան, այլ պէտք է գնալ, տեսնել երկիրը, մարդկանց: Արդէն իրան միանգամայն փորձուած ու պատրաստ է համարում. բարեկամները հաւաքում են մի փոքրիկ զումար (250 վեներտիկեան ոսկի) և տալիս են նրան: Այդ օգնութիւնը բաւական համարելով՝ էմինը ճանապարհ է ընկնում դէպի Արևելք:

III

1760 թւականի վերջերում էմինը հոլլանդական նաւով հանում է Կիլիկիայի Ալեքսանդրետ (Իսկէնդէրան) նաւահանգիստը և այդտեղից անմիջապէս անցնում է Հալէպ, ուր հիւրասիրութիւն է գտնում անգլիական հիւպատոսի մօտ: Մի շա-

բաթ հանգստանում է, պատրաստութիւններ տեսնում և երեք ծառաներով միանում է այն կարաւանին, որ Հալէպից գնում էր դէպի Հայաստան: Ութ օր այդպէս ճանապարհորդելուց յետոյ էմինը բաժանում է կարաւանից և իր ծառաների հետ սկսում է ճանապարհորդել Հայաստանում: Նրա ուղեցոյցներն էին իր հետ բերած մի կողմնացոյց և Պարիզում պատրաստուած մի աշխարհագրական քարտէզ:

Վերին աստիճանի հետաքրքրական են էմինի յիշատակաւրանի այն էջերը, ուր նկարագրուած է այդ ճանապարհորդութիւնը: Մեր գրականութեան մէջ չը կայ այդպիսի մի աղբիւր, որ այնքան մանրամասն ներկայացնէր հայկական իրականութիւնը XVІІІ դարի թիւրքական նահանգներում: Կարգալով այդ էջերը՝ մենք տեսնում ենք հայ ժողովրդի դրութիւնը նրկարագրուած մի պարզութեամբ, որ սպշեցնում է իր մէջ պահուած խոր, պատմական ճշմարտութեամբ: Կարծում էք, թէ XVІІІ դարի մի յիշատակարան չէ ձեր առջևը, այլ Րաֆֆիի «Կայծերը»: Եւ էմինն էլ ճիշտ ու ճիշտ այդ վէպի հերոսներից մէկն է յիշեցնում: Նա անցնում է գիւղից գիւղ, երեկոները իր շուրջն է հաւաքում գիւղացիներին և քահանաներին և ըսկսում է իր քարոզչութիւնը: Պատմում է Եւրոպայից, պատմում է՝ թէ ինչպէս եւրոպական ազգերը քաջ են, երջանիկ են, ազատ են և միաւմի բացատրում է, թէ հայերն էլ կարող են այդպէս լինել, եթէ կամենան:

Դա եւրոպական քաղաքակրթութեան ձայնն էր, որ եկել էր Փոքր Ասիայի այս հեռաւոր ու մութ անկիւնները: Էդմոնդ Բլրքի և այլ ազատամիտ անգլիացիների շրջանում կրթուած էմինը խիստ, անողորմ քննադատութեան ներկայացուցիչ է: Ժողովրդի առաջ խիստ լեզուով քննադատում է հայ հոգևորականութեան սխալ հասկացողութիւնները քրիստոնէական կրօնի մասին, դատապարտում է եկեղեցու պաշտօնեաների բռնած ընթացքը, նրանց քարոզները անշարժութեան, անտարբերութեան մասին:

Իսկ ի՞նչ էր հայ ժողովուրդը: Նա սարսափով էր լսում էմինի համարձակ, յանդուգն դիտաւորութիւնները, նա ա՛ն ու երկիւղով պաշարուած էր և միայն այն ժամանակ էր լսում տարօրինակ ճանապարհորդին, երբ տեսնում էր, որ լսելուց փաստ չի կրի շրջապատող մահմէդականների կողմից: Հայ ժողովրդի հոգեբանութիւնը բնորոշող փաստեր շատ կան էմինի պատմուածքների մէջ և դրանք վերին աստիճանի հետաքրքրական և ճշմարիտ են: Իսկոյն երևում է եւրոպացի մարդը, գաղափարի մարդը, որ մտել է մի անծանօթ երկիր և ցոյց է

տալիս խորը դիտելու, ուսումնասիրելու մի խոշոր ընդունակութիւն:

Ինքը, այդ ճանապարհորդը, ներկայանում է մեզ մի շատ զարմանալի կերպարանքով: Մենակ, երեք տեղացիների ընկերակցութեամբ, սա քարտէզով և կողմնացոյցով ճանապարհի ուղղութիւններն է որոշում, մտնում է մարդկանց մէջ, խօսում է յանուն մարդկային առաջադիմութեան, յանուն Եւրոպայի լուսաւորութեան: Այսքանն էլ բաւական էր, որ նա ուշադրութիւն գրաւէր ամեն տեղ. մինչդեռ նրա ազգակիցները ա՛ն ուղղով էին լսում նրա քարոզները, մահմէդական ազգաբնակչութիւնը զգալով՝ որ այդ մարդը ինչ-որ մի վտանգաւոր մտքի վրայ է, կասկածով էր նայում նրան: Բայց էմինը կարողանում է այդ տրամադրութեան առաջն էլ առնել: Նրա պատմածների մէջ կան տեղեր, որոնք տալիս են նրան մի արկածախնդրի կերպարանք: Բայց վերջիվերջոյ ընթերցողը համոզում է, որ գործ ունի մի շիտակ մարդու հետ, և եթէ նրա արկածները անհաւատալի, վիպական են երևում, պատճառն այն է, որ նրա յանձն առած առաքելութիւնն էլ անօրինակ էր, տարապայման էր:

Միայն մի տեղ էմինը հանդիպում է համակրանքի և պատրաստակամութեան: Այդ տեղը Մուշի ս. Կարապետի վանքն էր, որի վանահայրն էր Յովնան արքեպիսկոպոսը: Այս հոգևորականը, ինչպէս շուտով կը տեսնենք, էմինի գաղափարակից է հանդիսանում, մէկը այն սակաւաթիւ մարդկանցից, որոնք նրա հետ գրագրութիւն ունէին ծրագրած գործի մասին և երկրի մէջ պատրաստութիւններ էին տեսնում:

Չմեռը էմինը հասնում է Էրզրում և այնտեղ ստիպուած է լինում սպասել մօտ մի ամիս, մինչև որ ճանապարհները կը բացուեն: Բայց այդ մի ամիսը հանգստութիւն չէր նրա համար: Էրզրումում էմինը անյայտ ու աննկատելի չը մնաց, նըրան յատուկ համարձակութիւնը շուտով տարածեց նրա անունը քաղաքի ազգաբնակչութեան մէջ, ամենքը—հայ, թէ թիւրք—ճանաչեցին նրան իսկոյն և հասկացան, թէ ինչու է նա ճանապարհորդում: Թիւրքերը յուզուած էին, հայերը սարսափով էին լսում նրա դիտաւորութիւնների մասին: Նորեկ հայ ճանապարհորդի վրայ առանձնապէս ուշադրութիւն է դարձնում սարսափելի ենիչէրիների գլխաւորը (ենիչէր-աղասին): Առանց երկար մտածելու՝ նա վճռում է սպանել տալ էմինին: Բայց էմինի անվախ ու քաղաքավարի վարմունքը այնքան դուր է գալիս ենիչէր-աղասին, որ նա մինչև իսկ բարեկամանում է հայ ճանապարհորդի հետ: Գլխաւոր պատճառը, որ էմինը ազատուեց.

վտանգից, այնքան այս հանգամանքը չէր, որքան այն, որ այդ միջոցին էրզրուսի ենիչէրիները ապստամբուել էին թիւրք կառավարութեան դէմ և բանտարկել էին տեղական վալիին քաղաքի միջնաբերդում:

Ազատուելով թիւրք ազգաբնակութեան մոլեռանդութիւնից՝ էմինը շարունակում է իր ճանապարհը և 1761 թւի ապրիլին Բայազէթի վրայով համնում է Էջմիածին և ներկայանում է շամախեցի Յակոբ կաթողիկոսին: Մայր Աթոռում նա մնում է մի քանի շաբաթ, կաթողիկոսը նրան լաւ ընդունում է իբրև եւրոպական կրթութիւն ստացած մի մարդու: Չը գիտենք ինչու, էմինը հարկաւոր չէ համարում կաթողիկոսի առջև բաց անել իր ծրագիրները: Գուցէ պատճառն այն է, որ Էջմիածնի միաբանները՝ հակառակ կաթողիկոսի վարմունքին՝ շատ վատ էին վերաբերում մեր ճանապարհորդին: Բանը այնտեղ է համնում, որ միաբանները օգտուելով Յակոբ կաթողիկոսի բացակայութիւններից՝ մի օր բռնում են էմինին և բանտարկում նրան, պատճառաբանելով՝ որ նա մի շուն է սպանել: Կաթողիկոսը միւս օրը վերադառնում է, իսկոյն ազատում է բանտարկուածին և խիստ յանդիմանում է միաբաններին:

Սակայն անաշտութիւնը պահանջում է ասել, որ էմինի մէջ էլ կային տարօրինակութիւններ: Երբեմն նա այնպիսի բաներ էր անում, որոնց յետոյ ինքն էլ չէր հաւանում: Նրա ընտանորութեան մէջ՝ ինչպէս երևում է՝ կար այն պակասութիւնը, որ նա երբեմն անակնկալ վճիռների էր համնում, զարմանք պատճառող գործեր էր կատարում և իր նպատակին հասնելու համար երբեմն լաւ չը մտածուած միջոցներ էլ էր ձեռք առնում: Եթէ մենք ինկատի առնենք նրա կատարեալ մենակութիւնը սկսած գործի մէջ, ինկատի ունենանք մանաւանդ այն, որ ընկել էր ասիական տգէտ ու անճար մի ժողովրդի մէջ, մեզ մասամբ հասկանալի կը լինեն այդ տարօրինակութիւնները: Յամենայն դէպս վերին աստիճանի գնահատելի է էմինի բնաւորութեան այն գիծը, որ նա չէ թագցնում իր պակասութիւնները, խղճմտաւոր կերպով արձանագրում է և իր սխալները: Եւ այս հանգամանքը ցոյց է տալիս, որ էմինը անգիտակցաբար, ըստ էի ազդեցութեան տակ էր անում այնպիսի քայլեր, որոնց յետոյ ամենայն բարեխղճութեամբ անուանում էր «խենթութիւն»:

Ահա այդ «խենթութիւններից» մէկը տեղի է ունենում Էջմիածնում: Համնելով Մայր Աթոռը՝ էմինը պիտի գնար ներկայանալու վրաց արքունիքին: Բայց երկար մտածելուց յետոյ գալիս է այն եզրակացութեան, որ անօգուտ կը լինէր Հերակլի

առաջ դուրս գալ առանց դրամական ոյժի և ազդեցիկ յանձը-
նարարականներէ: Միանգամայն արդարացի եզրակացութիւն:
Եւ Էմիլը այդ եզրակացութիւնից հասնում է այն մտքին,
որ պէտք է վերագրանալ Անգլիա, ձեռք բերել այդ երկու ազ-
դեցիկ միջոցները և ապա գնալ Թիֆլիս:—Բայց այդ հասուն
միտքը իրագործելուց առաջ նա, ինչպէս ինքն է ասում, անում
է մի անխոհեմ քայլ: Վերցնում է, նամակ գրում Հերակլին և
Ինչ է առաջարկում:—Որ Հերակլը փեսայացնէ նրան, տայ իր
աղջիկը նրան: «Կեանքիս մէջ գործած ամենամեծ սխալներից
մէկն էր այդ քայլը», ասում է Էմիլը և բերում է իր այդ նա-
մակը: Ըիշտ որ երեխայական մի գործ: Ահա այդ գրութիւնը.

Նորին Բարձր Վեհապետութեան

Վրաստանի Իշխան Հերակլին, որին

Թող Աստուած պահպանէ

Թող հաճելի լինի Ձեր Բարձրութեան լսել Ձեր հաւատարիմ ծառայի
Խնդիրը:

Հինգ տարի սրանից առաջ մի երկար նամակ գրեցի Ձեր Բարձրութեան՝
Անգլիայից, Բասրայի անգլիական հիւպատոս պ. Չօ յանձնեց այդ նամակը Թիֆ-
լիսեցի հայկաճառական Մելքոնին, Ձեր հպատակին, որ ներկայացրել է նամակը
Ձեզ: Բայց որովհետև այսչափ ժամանակ ես պատիւ չունեցայ Ձեր Բարձրութեան
պատասխանը ստանալու, յուսահատուեցայ և ստիպուած եղայ այստեղ, շատ
նեղութիւններ կրելով անցայ ծովեր և ճանապարհորդեցի Միջին Սիբիրայի,
Քուրդիստանի ու Հայաստանի լեռներով:

Յօրիցս ստացած մի նամակի համաձայն, որ ես ստացել եմ Հնդկաստա-
նից, պարտաւոր եմ յայտնել Ձեր Բարձրութեան, որ նա ասում է, թէ ես միայն
այն պայմանով ներկայանամ Ձեր Բարձրութեան ալքունիքը, երբ Դուք կը բա-
րեհաճէք ինձ արժան համարել լինելու Ձեր Բարձրութեան փեսայ և սաք ինձ
մի վկայական, ստորագրուած ու կնքուած Ձեր Բարձրութեան կողմից և վաւե-
րացրած երկու եպիսկոպոսների կողմից: Իսկ եթէ այս պայմանին Դուք չէք
համաձայնում, նա, իմ հայրը, Յովսէփը, ինձ հրամայում է չը մտնել Ձեր եր-
կիրը:

Ես այս նամակը յանձնում եմ Ձեր մայրաքաղաք Թիֆլիսի հայ արքե-
պիսկոպոս Չաքմիրիային, որ ինձ խոստացաւ հաւատարմութեամբ յանձնել Ձեր
Բարձրութեան: Ձեր հաւատարիմ ծառան սպասում է անհամբեր յոյսերով ստա-
նալ պատասխան այս նամակին էրզրումի, Հալէպի վրայով Անգլիա

Մնամ Ձերդ և այլն

Գրուած էջմիածնում, 1760, ապրիլ ամսում:

Այս «խենթ քայլն» անելով, Էմիլը իր եկած ճանապարհ-
ներով վերագարձաւ Անգլիա: Նրա ճանապարհորդութիւնը տե-
ւել էր 13 ամիս:

Լոնդոնում նա գտաւ իր նախկին բարեկամների ու ծա-
նօթիկների շրջանը, ուր ընդունուեց առաջուայ պէս: Նորթում-
բերլանդի դուքսը համոզում էր նրան մնալ Անգլիայում, ծա-

ուայել անգլիական բանակի մէջ: Բայց էմինը երբէք չը հրա-
 ժարուեց իր մտքից: Ութ ամիս նա աշխատում էր Լոնդոնում,
 և այդ աշխատանքի հետեանքն էր, որ նա ծանօթացաւ Լոնդո-
 նի ուսաց դեսպան իշխան Գոլիցըլինի հետ, որից ստացաւ մի
 յանձնարարական նամակ ուսաց պետական կանցլեր իշխան
 Վորոնցովի անունով: Բացի զբանից, նա յանձնարարական նա-
 մակներ ունէր և Պետերբուրգի ուրիշ ազդեցիկ անձնաւորու-
 թիւնների հասցէին: Ուրեմն այս անգամ էմինը փոխում էր
 իր ճանապարհը. նա վճռել էր գործել Վրաստանում ուսաց
 կառավարութեան շակցութեամբ: Թէև Վրաստանը այդ ժա-
 մանակ դեռ չէր մտել Ռուսաստանի հովանաւորութեան տակ,
 բայց ուսական ազդեցութիւնը շատ մեծ էր վրաց արքունի-
 քում: Անկարող լինելով սեփական ոյժերով պաշտպանուել
 մահմէդականութեան հարուածներէց՝ վրացիները աշխատում
 էին օգնութիւն գտնել Ռուսաստանի մէջ: Հէնց այդ նպատա-
 կով էլ Հերակլի հայր Թէյմուրազը իր որդուն տալով թագաւո-
 րութիւնը՝ ինքը զնացել էր Պետերբուրգ:

Մի նոր ճանապարհորդութիւն սկսելու, մի նոր փորձ
 փորձելու համար էմինը ունէր պաշտօնական անձանց շակ-
 ցութիւնը: Մնում էր դրամական օգնութեան հարցը: Էմինի
 պաշտպան դուքսը այս դժուարութիւնն էլ վերացրեց՝ տալով
 նրան 100 անգլիական ոսկի. 60 ոսկի էլ միւս ծանօթները
 տուին: Դա միանուագ նպաստ չէր. Էմինին խոստացան տարե-
 կան 100 ոսկի ուղարկել երեք տարուայ ընթացքում: Եւ բա-
 ւական համարելով այդ նպաստը, որ շատ համեստ մի գումար
 էր նկատի առնելով սկսելիք գործը, էմինը նոյն 1761 թւակա-
 նի հոկտեմբերին ճանապարհ ընկաւ դէպի Ռուսաստան: Մի
 սրտառուջ՝ դէպք է նա պատմում իր այդ ճանապարհորդութիւ-
 նից: Մեծ դժուարութիւններով հասնելով Ռիգա՝ էմինը
 հիւրընկալութիւն է գտնում Միլլեր անունով մի գերմանացու
 տանը: Այդ Միլլերը ծանօթանում է իր հիւրի հետ մօտիկուց,
 իմանում է նրանից՝ թէ ով է, որտեղից է գալիս, ինչեր են ան-
 ցել նրա գլխով և ինչ նպատակներ ու ծրագիրներ ունի աչքի
 առջև, և այնքան ոգևորւում է, այնքան սիրում է թէ Էմինին
 և թէ նրա գործը, որ պատրաստականութիւն է յայտնում տալ
 իր հիւրին իր կարողութեան կէսը: Էմինը յուզուած բարի
 գերմանացու այդ վառ համակրանքից՝ շնորհակալութիւն է
 յայտնում և մերժում է ընդունել առաջարկուած օգնութիւնը,
 որովհետև Միլլերը հարուստ մարդ չէր, ընտանիքի տէր էր
 և պիտի իր երեխաների մասին մտածէր:

Պետերբուրգում էմինը իր յանձնարարական նամակների

օգնութեամբ տեսնուում է բարձրաստիճան անձանց հետ, ներկայանում է իշխան Վորոնցովին և անգլիական դեսպան Քէյթին: Երկուան էլ շատ լաւ ընդունում են նրան, վերաբերում են մեծ ուշադրութեամբ: Վորոնցովը խօսում է Ելիզաւետա կայսրուհու հետ, որ խոստանում է ամեն տեսակ օգնութիւն հասցնել էմինին: Բայց մի քանի շաբաթ չ'անցած՝ կայսրուհին վախճանում է: Նոյն տեսակ տիուր ելք է ստանում էմինի ծանօթութիւնը Հերակլի հայր Թէյմուրազի հետ: Իշխան Վորոնցովի միջոցով ներկայանալով Թէյմուրազին՝ նա սիրալիբ ընդունելութիւն է գտնում, բայց մի քանի ժամանակից յետոյ Թէյմուրազն էլ վախճանում է:

Ելիզաւետա կայսրուհուն յաջորդում է Պետրոս II: Վորոնցով նոր միապետի մօտ էլ միջնորդում է էմինի մասին և ստանալով կայսերական հաճութիւն՝ տալիս է անցագիր, որով էմինը պիտի ճանապարհորդէր մինչև Վրաստան: Միննոյն ժամանակ նա գրում է Հերակլին հետեւեալ յանձնարարական թուղթը.

Իշխան հերակլին:

Տէր.

Նամակաբերս, Յովսէփի էմինը, մի հայ քրիստոնեայ, ծնուած է Պարսկաստանի համազան քաղաքում, դոստիարակուած է Անգլիայում և զինւորական արուեստի մէջ կատարելագործուած Գերմանիայում, որ նա իր վարքով արժանի է դարձել այդ յայտնի ազգութեան համակրութեանը: Լսելով ձեր յայտնի անունը, որոշել է գալ ձեզ մօտ և իր ծառայութիւնն առաջարկել Ձեզ:

Լոնդոնի իր ազնական բարեկամները և մեր կայսերական դեսպան իշխան Գոլցըրին յանձնարարական նամակներով նրան ուղարկել են մեզ մօտ: Այստեղ գալուց յետոյ մենք յարմար համարեցինք նրան ներկայացնել Ձեր հանգուցեալ հօրը, Թէյմուրազ թագաւորին, որ տեսնելով նրան՝ շատ հետաքրքրուեց նրանով և խոստացաւ նրան տանել Վրաստան իր հետ: Իր մահից մի քանի օր առաջ նա առայց, որ էմինը ճանապարհուի դէպի Վրաստան առանց ուշանալու: Նա այդպէս էլ անում է:

Իսկ թէ Գուր չը կամենաք նրան պահել Ձեզ մօտ և կամ եթէ անհամաձայնութիւն ծագէ Ձեր և նրա մէջ, մենք խնդրում ենք, որ ամենավայելուէ կերպով նրան յետ ուղարկէք, որովհետև մենք պատրաստ ենք մեծ հաճոյքով նըրան՝ մեր կայսերական ծառայութեան մէջ պահել, որովհետև մեզ լաւ յայտնի են նրա բնաւորութիւնն ու լաւ վարքը:

1762 Թւականի մարտ ամսին էմինը դուրս է գալիս Պետերբուրգից և Մոսկուայի վրայով ուղևորուում է դէպի Աստրախան: Այստեղ նա ստիպուած է լինում Ֆալ, մինչև որ Կովկասեան լեռներում ճանապարհները կը բացուեն: Աստրախանը, ինչպէս գիտենք, շատ կարևոր դեր էր կատարում XVIII դարում, երբ հայերը

յարաբերութիւն էին սկսել Ռուսաստանի հետ և ամեն ջանք գործ էին դնում Անդրկովկասի մէջ քաղաքական շարժում առաջ բերելու և աջողեցնելու համար: Աստրախանում մեծ թւով հայեր կային. նրանք էմինի ծրագիրը համակրութեամբ ընդունեցին, և 30 հայ զինւորներ պատրաստականութիւն յայտնեցին գնալ նրա հետ:

Մայիս ամսին էմինը շրջապատուած այդ շքախմբով մտաւ Զզլար քաղաքը, որ այն ժամանակուայ ուսսական սահմանագլխի վրայ գտնուող մի կարևոր բերդ էր: Զզլարի բնակիչները մեծ մասամբ հայեր էին, որոնք գաղթել էին գլխաւորապէս Դարաբաղից, ուր մահմէդական լուծից ազատուելու այնքան եռանդուն փորձեր էին կատարուել, այնքան պատերազմներ էին տեղի ունեցել: Էմինը, որ գնում էր նոյն այդ գործը շարունակելու համար, չէր կարող զզլարցիների կողմից անտարբերութեան հանդիպել: Եւ իրաւ, այդ հայաբնակ քաղաքում նա գտաւ շատ լաւ ընդունելութիւն, որ սակայն էմինի համար անախորժ հետեանքներ ունեցաւ: Տեղական սահմանապահ ուսս զօրքի հրամանատար գեներալը թէ ազգաբնակչութեան ոգևորութեան և թէ անծանօթ ճանապարհորդի շքախմբի մէջ ինչ-որ կասկածելի հանգամանքներ է տեսնում ու մի շարք արգելքներ է յարուցանում: Պատրուակ նա շատ հեշտ է գտնում: Պետրոս կայսրը գահընկէց էր եղել, նրա տեղ թագաւորում էր Եկատերինա երկրորդը: Գեներալը յայտնեց էմինին, որ ինքը չէ ընդունում Պետրոսի տուած անցագիրը և պահանջեց, որ նա վերադառնայ Ռուսաստան: Էմինը ստիպուած եղաւ կատարել այդ պահանջը: Մի զինւորի ուղեկցութեամբ նա Զզլարից յետ գնաց, որպէսզի նոր հրամաններ բերէ իր հետ:

Միայն օգոստոսին նա կարողացաւ հասնել Մոսկուա. այստեղ նա հաճութեամբ իմացաւ, որ Պետերբուրգ գնալու հարկաւորութիւն չը կայ, քանի որ Եկատերինա կայսրուհին և ամբողջ արքունիքը Մոսկուա են եկել: Էմինը իսկոյն դիմեց Վորոնցովին, որը լսելով սահմանապահ գեներալի վարմունքը՝ շատ բարկացաւ, իսկ էմինից ներողութիւն խնդրեց այդ թիւրիմացութեան համար: Լոնդոնի ուսսաց դեսպան Գոլիցըրին էլ այդ միջոցին Մոսկուայում էր: Վորոնցովն ու Գոլիցըրինը կանչում են էմինին իրանց մօտ, երկար հարցուփորձ են անում նրա ճանապարհորդութեան նպատակի, նրա ծրագրիների մասին: Էմինը տալիս է բացատրութիւններ, որոնք միանգամայն գոհացնում են երկուսին էլ և նրանք յուսադրում են նրան ամեն տեսակ օգնութիւն անելու խոստումներով: Բացի դրանից՝

Էմիլին մի անգամ էլ յայտարարուեմ է, որ եթէ նա անաջողութեան հանդիպէ Անդրկովկասում և առհասարակ չը կամենայ մնալ այնտեղ, միշտ տեղ կ'ունենայ ուսաց ծառայութեան մէջ:

Այս ակամայ թափառումները մէջ 1762 թւականն էլ անցաւ: Էմիլը մնաց Մոսկուայում մինչև 1763-ի մարտը: Այդտեղ նա ստացաւ իր անգլիացի բարեկամներից խոստացած նպաստը՝ 100 ռակի: Այստեղ էլ գտնուեց մի հարուստ հայ, որ բացառութեան պէս մի երևոյթ կազմեց իր այն փոքրիկ նուէրով, որ յատկացրեց Էմիլի գործին. Դա Յովհաննէս Լազարեանն էր, այն հռչակաւոր հայ մարդը, որ այնքան եռանդուն մի գործիչ պիտի հանդիսանար Ռուսաստանում Էմիլից յետոյ: Լազարեանը տուեց Էմիլին 250 ռուբլի, 40 ֆունտ շաքար և 5 ֆունտ թէյ: Արձանագրելով այս առաջին լուծման, որ մի հայ գցում էր այն գործի գանձանակի մէջ, որ այնքան ոգևորել էր Էմիլին, մեր ճանապարհորդը չէ մոռանում մի քանի արդարացի նկատողութիւններ անել հայ հարուստների և վաճառականների մասին: Նա ասում է, որ եթէ հարուստ հայերը դէպի փողը ունեցած իրանց սիրոյ կէսը ունենային դէպի ազատութեան գաղափարը, մահմէդական բռնութիւնը վաղուց վերացած կը լինէր հայերի գլխից: Եւ պէտք է աւելացնել, որ ամենից շատ Էմիլն ունէր իրաւունք այսպիսի մի կծու յանդիմանութիւն շարտելու հայ հարուստների ճակատին, նա, որ ճանապարհորդում էր անգլիացիների փողով, որ ամեն կերպ աջակցութիւն էր ստանում հայերից այնքան հեռու, հայերին այնքան քիչ ճանաչող մի ազգի բարձր ազնուականութեան կողմից...

Նոր հրամաններով և յանձնարարականներով Էմիլը մի անգամ էլ մտնում է Աստրախան: Այս անգամ աւելի մեծ աջողութեան է հանդիպում այդ զարմանալի մարդը, որ յուսահատուել չը գիտէր: Այս անգամ նրան միանում են 80 հայ ձիաւորներ: Էմիլը ծանօթանում է Ղարաբաղի հռչակաւոր հերոս Աւան-խանի *) կնոջ և աղջկայ հետ և այնքան հաւանում է օրիորդին, որ խոստանում է նրա հետ ամուսնանալ, եթէ կարողանայ աջողութեամբ վերադառնալ Հայաստանից: Աւան-խանի աղջկայ անունը Մարիամ էր, և անշուշտ Էմիլը նրա մէջ միայն կանացի հրապոյր չը գտաւ, այլ և այն գրաւիչ հրապոյրը, որ նա Ղարաբաղի ազատութեան համար մարտնչող հերոսի գաւակն էր:

*) Աւան-խանի մասին մենք մանրամասն խօսել ենք մեր այս աշխատութեան առաջին մասում:

Ղզլարի սահմանապահ զենեւրալը այս անգամ ոչինչ արգելք հնարել չը կարողացաւ: Նա հարկադրուած էր լաւ ընդունելութիւն ցոյց տալ և 120 կողակների ուղեկցութեամբ ճանապարհ դրեց Էմինին դէպի սահմանը: Իր 80 ձիաւորների հետ անցնելով Կովկասեան լեռները՝ Էմինը 1763 թւականի գարնան վերջերին մտաւ Թիֆլիս և հայերի ու վրացիների կողմից փառաւոր ընդունելութիւն գտաւ:

ԼԷՕ

(Գը շարունակուի)